

4952



ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան



11 » 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 046 - 24

Ձեռնարկողը՝

«ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ
Կոտայք, ք. Ծաղկաձոր, Չարենցի 35,

Գործունեությունը՝

Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների
արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 046 - 24
« 11 » 01 2024թ.

**Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների արդյունահանման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, բն. Խաչիկ

Ներածական մաս. Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրում «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գնիշիկի հանքավայրի քվարցիտները ներկայացված են վերին դևոնի (D3) առաջացումներով, որոնք մերկանում են Արփա և Գնիշիկ գետերի ավազաններում: Հանքավայրը գտնվում է Գնիշիկ գետի ձախ ափին՝ 2375.8մ նիշ ունեցող բարձունքի ջրբաժանում: Տարածքը բնութագրվում է հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ 39° 39' 23'' հյուսիսային լայնության, 45° 14' 43'' արևելյան երկայնության: Բուն հանքավայրի և դրան հարող տարածքները բնութագրվում են քարքարոտ մերկացումներով, որոնք գործնականում զուրկ են բուսահողից:

Նկարագրական մաս. Գնիշիկի քվարցիտների հանքավայրը գտնվում է Վայոց Ձորի մարզի Արենի խոշորացված համայնքի Խաչիկ գյուղի վարչական սահմաններում՝ բնակավայրից 4.6 կմ հարավ-արևմուտք: Հանքավայրի մոտակա բնակավայրերն են Գնիշիկ և Ամաղու գյուղերը, որոնք գտնվում են համապատասխանաբար՝ 4.5 կմ արևելք և 4 կմ հյուսիս-արևմուտք:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների հանքավայրի պաշարները 01.01.2022թ. դրությամբ (օգտակար հանածոն գնահատված է և ցեմենտի և ապակու արտադրության համար) հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 2794-Ա հրամանով, երկրաբանատնտեսագիտական վերագնահատման արդյունքների վերաբերյալ հաշվետվության հեղինակների կողմից առաջարկվող բացահանքի սահմաններում՝ B₁ C₁ կարգերով, 690.0 հազ.տ կամ 288.7 հազ. մ³ քանակով: Գնիշիկի քվարցիտների



հանքավայրի Ընկերության կողմից նախագծված բացահանքի սահմաններում 01.01.2022թ-ի դրությամբ պարփակված են ընդհանուր 135295մ³ ծավալով մակաբացման ապարներ: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ օգտակար զանգվածի հաշվարկվել է 14435մ³, իսկ շահագործման ժամկետը՝ 20 տարի: Նշված ցուցանիշներին համապատասխանող մակաբացման միջին գործակիցը կազմում է 0.196 մ³/տ:

Հանքավայրի 2022թ. կատարված վերագնահատման արդյունքում նախկինում ապակու արտադրության համար հաստատված քվարցիտները և դրանց անմիջապես հարող ապարները գնահատվել են նաև որպես պորտլանդցեմենտային բովախառնուրդի սիլիկատային մոդուլը շտկող հավելանյութ, որում սիլիցիումի օքսիդի նվազագույն թույլատրելի պարունակությունը "Краткий справочник технолога цементного завода" (Москва, Стройиздат, 1974г.) տեղեկատուի համաձայն ընդունվել է 70 %:

Նախագծված բացահանքի եզրագծային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են.

1.X=4391415 Y=8520998	14.X=4391653 Y=8521056	27.X=4391532 Y=8521083
2.X=4391418 Y=8520994	15.X=4391668 Y=8521081	28.X=4391507 Y=8521081
3.X=4391425 Y=8520988	16.X=4391677 Y=8521106	29.X=4391496 Y=8521083
4.X=4391434 Y=8520982	17.X=4391669 Y=8521148	30.X=4391469 Y=8521103
5.X=4391442 Y=8520981	18.X=4391665 Y=8521157	31.X=4391458 Y=8521107
6.X=4391463 Y=8520979	19.X=4391659 Y=8521160	32.X=4391442 Y=8521109
7.X=4391500 Y=8520981	20.X=4391635 Y=8521108	33.X=4391421 Y=8521108
8.X=4391520 Y=8520982	21.X=4391626 Y=8521097	34.X=4391408 Y=8521103
9.X=4391531 Y=8520985	22.X=4391613 Y=8521085	35.X=4391403 Y=8521099
10.X=4391544 Y=8520989	23.X=4391599 Y=8521077	36.X=4391400 Y=8521093
11.X=4391562 Y=8521005	24.X=4391579 Y=8521068	37.X=4391402 Y=8521058
12.X=4391587 Y=8521017	25.X=4391558 Y=8521067	38.X=4391407 Y=8521015
13.X=4391627 Y=8521033	26.X=4391548 Y=8521071	39.X=4391410 Y=8521007

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով, անհրաժեշտության դեպքում նախնական փխրեցմամբ՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հանքավայրի մշակման համար ընտրվել է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին ժամանակավոր լցակույտեր տեղափոխումով:

Բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով:

- Ամենամեծ երկարությունը – 295 մ,



- Ամենամեծ լայնությունը – 130 մ,
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 44.0 մ,
- Մակաբացման ապարների քանակը – 135.3հազ.մ³,
- Հողաբուսական շերտի ծավալը-2900մ³
- Բացահանքի օտարման մակերեսը – 2.42հա:

Նախագծվող բացահանքից արդյունահանվելու է 288700մ³ կամ 690.0հազ.տ քվարցիտներ: Յուրաքանչյուր տարի արդյունահանվելու է 14435 մ³ կամ 34.5հազ.տ քվարցիտի զանգված:

Հանքավայրի բացումը նախատեսված է կատարել նրա հարավ-արևմտյան մասի (6-րդ մարմին)՝ 2370.0մ բարձրության նիշից: Բացահանքի շահագործման լեռնանախապատրաստական աշխատանքների ընթացքում նախատեսված է ավտոճանապարհի կառուցում՝ դեպի բացահանքի 6-րդ մարմնի հարավ արևմտյան մասի՝ 2370.0մ բարձրության հորիզոն (ավտոճանապարհի երկարությունն է 487մ, հողային աշխատանքների ծավալը՝ 1290մ³), բացահանքում 2370.0մ բարձրության հորիզոնում մակաբացման ապարների հեռացում (1750 մ³ ծավալով) և արդյունաբերական հրապարակի կարգաբերում (220մ³ ծավալով): Նշված աշխատանքները նախատեսվում են կատարել բուլդոզերի օգնությամբ:

- Հանքավայրի մշակման համար ընտրված համակարգի տարրերն են՝
- Հանքաստիճանի բարձրությունը – 5.0 մ;
- Անվտանգության բերմայի լայնությունը – 1.7 մ;
- Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 80°;
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ:

Օգտակար զանգվածի և մակաբացման ապարների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 1.0մ³ շերտի տարողությամբ էքսկավատորով: Օգտակար հանածոյի տեղափոխումը կատարվում է սպառողի կողմից:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից՝ ընտրված է արտաքին լցակույտառաջացում: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Մակաբացման ապարները շահագործման ընթացքում նախատեսվում է ավտոինքնաթափով տեղափոխել 0.5կմ միջին հեռավորության վրա գտնվող բացահանքի նախկին արդյունահանման ժամանակ առաջացած լցակույտի շարունակության վրա: Շահագործման ավարտին լցակույտը կհարթեցվի:

Բացահանքում մակաբացման ապարները՝ 132120մ³ ծավալով, հիմնականում ներկայացված են ծածկող ապարներով՝ 0.3մ հզորությամբ ժամանակակից նստվածքներով և օգտակար հանածոյի կախված և պառկած կողերը հարող դեյուվիալ բերվածքներով՝ ավազաքարերի կտորներով խառը ավազակավերով: Հանքավայրի առանձին հատվածներում առկա մոտ 2900մ³ հողաբուսական շերտը նախատեսված է հանել և պահեստավորել արդեն գոյություն ունեցող՝ նախկինում ձևավորված հողաբուսական շերտի ժամանակավոր լցակույտում, որտեղ կդարսվի լայնակույտերով և կպահպանվի հետագա ռեկուլտիվացիոն աշխատանքների նպատակով օգտագործելու համար: Ողողումը և հողատարումը կանխելու համար լայնակույտի մակերևույթը թեքությունները նախատեսված են ամրացնել խոտացանքով:



Շահագործման 19-րդ տարվանից սկսած՝ մինչև շահագործման ավարտը, 36200 մ³ մակաբացման ապարներն աստիճանաբար կտեղափոխվեն 2310մ բարձրության հորիզոնի շահագործված հատակի վրա: Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ՝ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Տեխնիկական ջուրը բերվելու է բացահանք ջրցան-վացող մեքենայով, իսկ խմելու ջուրը՝ ջրի ցիստեռնով: Փոշենստեցման մակերեսներն ընդհանուր կկազմեն 8800 մ², իսկ ջրի ծախսը՝ 4400 լիտր: Բացահանքը խմելու և տեխնիկական ջրով ապահովվում է պայմանագրային հիմունքներով՝ հանքարդյունահանման թույլտվություն ստանալուց հետո:

Կենցաղային կեղտաջրերը՝ 0.13 մ³ օրեկան ծավալով կլցվեն բետոնյա լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար կհեռացվեն:

Հանքավայրում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում՝ տրանսպորտը և հանույթային աշխատանքները: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, լցակույտ) ազոտի ու ածխածնի օքսիդները և ածխաջրածինները (դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ): ՇՄԱԳ-ում իրականացված գումարային արտանետումների /ներառյալ՝ հարևանությամբ շահագործվող հանքավայր/հաշվարկների և մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքերի համաձայն՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Հանքավայրի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ ուղղված մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- կենդանական աշխարհի պահպանության նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման համար,
- տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա գոտիների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:



Ռեկուլտիվացիոն վերջնական աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Տեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կկատարվի տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիա՝ լեռնային աշխատանքների հետևանքով խախտված և վերականգնված 1.79հա տարածքի վրա: Արդեն իսկ կոպիտ հարթեցված՝ ներքին և արտաքին լցակույտերի մակերեսներին կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով կփոփ առանձին կուտակված հողաբուսական շերտը՝ կատարելով մաքուր հարթեցում: Որպես կենսաբանական ռեկուլտիվացիայի եղանակ նախատեսված է կիրառել հիդրոցանքի եղանակը: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ բացահանքերի հատակի 9250մ² ողջ մակերեսով, 8100մ² լցակույտերի, 300մ² մուտքային ճանապարհի մակերեսներով, ինչպես նաև արտադրական հրապարակի՝ 250մ² մակերեսով: Հարթեցման ընդհանուր՝ 17900մ² մակերեսում լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 725.3 + 374.5=1099.8 հազ. ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման աշխատավարձերի, օգտագործվող նյութերի, տրանսպորտի և մեղմացման միջոցառումների համար նախատեսված ծախսատեսակները:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը և սոցիալական միջավայրը /ներառյալ՝ աղմուկ, թրթռում/: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսը գնահատվել է 200 հազ. ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Հանքավայրի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող, բնության հուշարձանների և պատմամշակութային հուշարձանների սահմաններում: ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ ուղղված կենսաբազմազանության պահպանությանը կամ հնարավոր ազդեցությունների մեղմացմանը կամ կանխարգելմանը: Համաձայն ՇՄԱԳ-ում ներկայացված՝ «ԲԻՈ ԳԱՄԱ» ՍՊԸ-ի կողմից հանքավայրի տարածքում կատարված կենդանիների բազմազանության ուսումնասիրության հաշվետվության արդյունքների՝ գործունեության տարածքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի



նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Փորձաքննական գործընթացում «Արփա» բնապահպանական հիմնադրամի կողմից ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ հիմնադրամը չի առարկում «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ-ի կողմից ընդերքօգտագործման աշխատանքների իրականացմանը՝ տեղեկացնելով, որ տարածքը անմիջական սահմաններ չունի «Արփա» պահպանվող լանդշաֆտի հետ և չի հանդիսանում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների ապրելավայր:

Գնահատման և փորձաքննության փուլերում Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են հանրային քննարկումներ: Քննարկման ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության, բարձրացված հարցերին տրվել են պատասխաններ: Հարցերը վերաբերել են Ընկերության կողմից ընդերքօգտագործման թույլտվություն ստանալու դեպքում, կախված արդյունահանման ծավալներից՝ համայնքապետարանի կողմից սահմանվող վարձավճարին, հանքանյութ տեղափոխող տրանսպորտային միջոցների շահագործմանը՝ արգելելով սեփականաշնորհված հողատարածքներով երթևեկելը և դաշտային աշխատանքներին խոչընդոտելը: Քննարկման ընթացքում բարձրացվել են նաև հարցեր «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ-ի նախագծով նախատեսված լցակայանի 300քմ մակերեսով տարածքի «Յուլի-Դալի» ՍՊԸ-ի կողմից վարձակալած հողամասի հետ համընկնման վերաբերյալ: «Յուլի-Դալի» ՍՊԸ-ի ներկայացուցիչը խնդրեց հարցին լուծում տալ: ՇՄԱԳ-ում և նախագծում արվել են համապատասխան փոփոխություններ՝ «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ-ի լցակայանի համար նախագծված տարածքներից հանվել է «Յուլի-Դալի» ՍՊԸ-ի վարձակալած տարածքը:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների, ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական լուծումների և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

2. Հանքանյութ տեղափոխող մեքենաներն անհրաժեշտ է բեռնավորել սահմանված չափով՝ հնարավոր սոցիալական ազդեցություններից և ավտոճանապարհների վրա ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:



3. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

4. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

5. Ընկերության կողմից ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը (կարևորելով հարակից տարածքներում կենդանատեսակների պահպանության նպատակով տեխնիկատրանսպորտային միջոցների ձայնախլացուցիչ սարքավորումներով ապահովումը և փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը) և դրանց իրականացման ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝


Հերիքնազ Արարչյան
